ԹՈՒՂԹ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՆԵՐԳԱՂԹԻ

պատակն-արդարացնում է միջոցները։

Մարդիկ կան, որ իրենց նպատակներին հասնելու համար այս սկզբունքն որդեգրելով, խտրություն չեն դնում միջոցների միջև և պատրաստ են միշտ աչք փակելու պատմական իրողությունների հանդեպ և պատմական անցքերն ու դեպքերը շրջված ներկայացնելով աղավաղելու իրականությունը։

Այդպիսի մարդկանց թվին են պատկանում Հռոմի պապ Պիոս ԺԲ և կարդինալ Աղաճանյանը, որոնք ճգնում են շրջել հայոց դարավոր պատմությունը և Վատիկանի, այսինքն հռոմեական եկեղեցու, քահանայապետներին ներկայացնել որպես հայ ժողովրդի մշտական «պաշտպան» ու «փաստաբան» քրիստոնեության ամենահին դարերից սկսած։ Վատիկանում հապճեպ կերպով փաստաթղթած այս «հայտնագործության» հեղինակները խուսափել են իրենց «հայտնագործությունը» պատմական անհերքելի փաստական տվյալներով ամրապնդելու, որովհետև այդպիսիք առհասարակ բացակայում են, թե՞ ելնելով «պապի անսխալականության» դրույթից կարծել են, որ պապի սուտ հայտարարությունները ու հյուսած առասպելները կընդունվեն անառարկելիորեն։

Հայոց պատմության փոքր ի շատե իրազեկ մարդկանց մոտ Հռոմի պապերի «հայասիրության» այս անակնկալ փողահարումը միայն կասկած կարող է առաջացնել. հարց է ծագում, թե ներկա պահին ի՞նչն է շարժառիթ ծառայել Վատիկանի «հայասիրությունը» թմբկահարելու։

Այս հարցին պատասխանելու համար հարկ կլինի ծանոթանալ Միջին ու Մերձավոր Արևելքի հռոմեադավան բոլոր եկեղեցիների պետ՝ կարդինալ Աղաճանյանի 1946 թ. հուլիս 6-ի թվակիր շրջաբերականին։ Կարդինալական իր այս անդրանիկ շրջաբերականում Հռոմի պապ Պիոս ԺԲ-ի «հայասիրությունը» տարփողելուց զատ, Աղաճանյանը շոշափում է հայ ժողովրդի ազգահավաքման համար կենսական մեծ կարևորություն ներկայացնող ու չափազանց հրատապ մի խնդիր, այն է ներգաղթի խնդիրը։ Սակայն իր հիմնական դիտավորություններն ու նպատակները սքողելու համար կարդինալ Աղաճանյանը ներգաղթի խնդիրը կապում է նախ կրոնի ազատության և ազգի ու հայրենիքի գաղափարների մշուշապատ բնորոշման հետ, որպեսզի կարողանա Սովետական Հայրենիքի ու ներգաղթի հանդեպ ունեցած իր թշնամական դիրքավորումն արդարացնել հերյուրանքներ շարահյուսելով և զրպարտությունների մեթոդին դիմելով։

Սովետական Հայրենիքում կրոնի ազատության չգոյության մասին մինչև ուղն ու ծուծը զրպարտություններով ներծծված այս շրջաբերականը, որը կրում է «Թուղթ հովուական» խորագիրը, ամբողջապես ուղղված է ներգաղթի դեմ, այդ պատճառով էլ ավելի ճիշտ կլիներ կոչել այն «Թուղթ ընդդեմ հայրենիքի և ներգաղթի»։

Չնայած կարդինալ Աղաճանյանը շրջաբերականում շոշափված խնդիրներն ամենայն զգուշությամբ աշխատում է ներկայացնել սքողված, կրոնական շղարշով պարուրված, մշուշապատ ձևով, սակայն դժվար չէ կռահել նրա իսկական դիտավորությունները. խնդրի կրոնական զգեստավորումը և վարագուրումը չեն կարող փրկել կարդինալին, որովհետև կրոնական դիմակի տակից ակնհայտ կերպով երևում են Վատիկանի քաղաքական նպատակները, որոնց կենսագործումը Միջին ու Մերձավոր Արևելքում իր ուսերի վրա է առել կարդինալ Աղաճանյանը։

Շրջաբերականի սկզբում կարդինալ Աղաճանյանը ազդարարում է, որ իր բաղձանքն

է «Կաթողիկէ Սուրբ Հաւատքի. . . . . երկնային լուսով դիտելու և դատելու աշխարհի և միջավայրիս ներկայ խառնաշփոթ կացութիւնը»։ այս խորհրդաւոր ազդարարութիւնը վերծանելու համար պետք է քայլ առ քայլ և ուշի ուշով հետևել Կարդինալ Աղաճանյանի շրջաբերականում շարադրված մտքերի հետևողական զարգացմանը։

Նշված ազդարարութիւնից անմիջապես հետո կարդինալը շրջաբերականում նկարագրում է Պիոս ԺԲ պապի կողմից իր «հայրական սիրով առանձին ունկնդրութեան արժանանալը, միաժամանակ շմոռանալով փառաբանել ու խնկարկել պապի «հայասիրությունը»։— «... մինչ Ինքը, Հովուապետ աշխարհասփիւռ Քրիստոսեան Հօտին, պահ մը իր համակրալից ուշադրութիւնը կը կեդրոնացնէր իր Հայազգի զաւակներուն վրայ և անոնց ու բովանդակ Հայութեան վերայ կը հրաւիրէր երկնային օրհնութեանց առատութիւնը»։ Օ՜հ զարմանք, Հռոմի պապը «երկնային օրհնութեանց առատութիւնն» է հրավիրում «բովանդակ Հայութեան վրա»։ Չլինի՞ թե Հռոմի պապ Պիոս ԺԲ զղջացել և ցանկանում է քավել իր բոլոր նախորդների հանցանքները, որոնք դարերի ընթացքում թշնամական քաղաքականություն են վարել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ, Հայ Եկեղեցին հերձուածող համարելով. իսկ այսօր Պիոս ԺԲ պապն օրհնում է «բովանդակ Հայութեան», որին, ինչպես քիչ հետո կտեսնենք, անասված և հերձվածող են համարում դարձյալ։

Պապի «հայասիրությունը» «երկնային օրհնութեանց առատութիւնը բովանդակ Հայութեան վրայ» հրավիրելով չի սահմանափակվում. դրան հետևում է 32 նոր կարդինալների անվանումը՝ «...որոնց շարքին և Կիլիկիոյ Տան Հայ Կաթողիկէ Պատրիարքը», —գրում է Աղաճանյանն իրեն կարդինալական ծիրանի շնորհելու մասին։ Այս քայլն, ինչպես պապի, Աղաճանյանի, այնպես և ոմանց կողմից դիտվում է որպես հայ ազգին արված մեծ պատիվ և Վատիկանի «հայասիրության» ցուցանիշ։ Այնուհետև պապի «հայասիրությունն» ավելի ընդգծելու և ցայտուն դարձնելու համար կարդինալ Աղաճանյանը ցուցամոլության ախտով բռնված շարունակում է.

«Այս անզուգական պատուոյն կը յաջորդէր, պարագաներու գեղեցիկ զուգադիպութեամբ, Ս. Պապին ուրիշ մեկ աննախընթաց կարգադրութիւնը։ Նորին սրբութիւնը կը հրամայէր որ իր Գահակալութեան եօթներորդ տարեդարձին, Մարտ 12-ին, հայրապետական Ս. Պատարագը մենք մատուցանէինք մեր հայրենի ծէսով, իր օգոստափառ ներկայութեան... Սրբազան Պապը Ինքը երկիցս հայ լեզուով արտասանեց Ս. Աւետարաններու ընթերցումէն առաջ «խաղաղութիւն ամենեցուն» մաղթանքը։ Այդ նշանակալից օրը հայ ծէսը փառաւորուեցաւ յաչս Աշխարհի և Եկեղեցւոյ, ինչպէս թերևս բնաւ եղած չէր իր բազմադարեան յոլովոյթի ընթացքին։ Վատիկանի ձայնասփիւռը օրեր շարունակ գովքը հիւսեց Հայ ժողովուրդին և զանազան լեզուներով հաղորդեց մանրամասնութիւններ հայ պատարագի մասին և երգերէն ալ ինչ ինչ կտորներ»։

Կարդինալ Աղաճանյանն իրոք որ իրավունք ունի պարծենալու Հռոմեական եկեղեցու պատմության մեջ նախընթացը չունեցող այս հրաշքի առթիվ։

Ուրդ հարց է ծագում, թե ի՞նչ ներքին նպատակ կա թաքնված այս աննախընթաց արտաքո կարգի արարողությունների տակ։

Պատարագից հետո էլ, ինչպես իմանում ենք շրջաբերականից, «...Պապը բարեհաճեցաւ ընդունիլ հանդիսաւոր ունկնդրութեան Հռոմի հայ գաղութը և տօնակատարութեանց պատճառաւ Իտալիոյ, Ֆրանսայի, Պելճիքայի զանազան քաղաքներէ եկած Հայերը»։

«Այս առթիւ,— շարունակում է կարդինալ Աղաճանյանը,—Ս. Քահանայապետը համառօտ բայց համայնապարփակ ճառ մը խօսեցաւ որուն նկատմամբ ամեն Հայ քրիստոնեայ ուրիշ զգացում չի կրնար տածել բայց եթէ խորունկ երախտագիտութեան և հաւանութեան»։

Ապա շրջաբերականում շարադրում է պապի արտասանած ճառի ամբողջական տեքստը, որից մի մեջբերում բավական կլինի պարզելու, թե ինչպես է հրավում Վատիկանի «հայասիրության» առասպելը.

«Կարդինալ ընելով բարձրամեծար Պատրիարքը Կիլիկիոյ Հայոց, Մենք դիտում ուեցաւեք անշուշտ վարձատրելու գերազանց արժանիքները յոյժ արժանաւոր և ամենաճաւատարիմ աւագ եկեղեցականի մը, բայց կոչելով զայն անդամակցելու Հռոմէական Եկեղեցւոյ Սերակոյտին և Հայրապետական պատարագ մատուցանելու Սիքստեան մատրան մէջ իր մեծասքանչ ծէսին ամբողջ շքեղութեամբը, ուզեցինք միևնոյն ատեն շեշտել, ու այսպես ըսենք, պատկել հանդիսաւոր ցոյցով մը շարքը փաստերու հոգածութեան և սիրոյ, որ քրիստոնէութեան ամենահին օրերէն՝ դարերու ընթացքին մինչև այսօր չէ դադրած երբեք Պետրոսի Գահը տածելէ Հայաստանի և իր ժողովրդեան հանդէպ։ Կրնանք արդարև մենք իրաւամբ ըսել թէ այս

գերազնիւ Ազգը, իր ձախողանքներուն և տառապանքներուն մէջ ունեցած է միշտ պաշտպան և փաստաբան Հռոմէական Քահանայապետը»։ (Ընդգծումները Աղաճանյանինն են)։

Պիոս ԺԲ պապի այս պերճախոսությունը, ինչպես տեսնում ենք, փաստաբղմաններով հիմնավորված չէ և անհնարին էլ է այդ անել, որովհետև Հռոմի Եկեղեցին և նրա քահանայապետները երբևիցե հանդես չեն եկել հայ ժողովրդի շահերի «պաշտպանի» կամ «փաստաբանի» դերում, մանավանդ նրա պատմության ձախորդ օրերին. պապի սուտ հայտարարությունները այն մասին, որ իբր թե «քրիստոնէութեան ամենահին օրերէն՝ դարերու ընթացքին մինչև այսօր.. Պետրոսի Գահը», այսինքն Հռոմեական եկեղեցին, «չէ դադրած երբեք»... սեր և հոգածություն «տածելէ Հայաստանի և իր ժողովրդեան հանդէպ», հեռու է իրականությունից լինելուց. ընդհակառակը, հայտնի է, որ դարերի ընթացքում Հռոմեական եկեղեցին անհաշտ դիրք բռնելով Հայ Եկեղեցու հանդեպ և նրան հերձվածող համարելով շարունակ հալածել է Հայ Եկեղեցին ու նրա հետևորդներին։ Հռոմեական եկեղեցին ջանք չէր խնայում ոչնչացնելու հայ պետականության անկումից հետո հայ ժողովրդի ազգապահպանման նեցուկը հանդիսացող Հայ ազգային եկեղեցին, այն եկեղեցին, որն իր հիմնադրման օրից մինչ այսօր հայ ժողովրդի թե՛ երջանկության և թե՛ դժբախտության օրերին անբաժան է եղել իր ժողովրդից և քանիցս հայությանն փրկության խաչն ուսած նրա հետ միասին բարձրացել է մինչև Գողգոթա, խաչվել, հարություն առել, մեծ արհավիրքների բովից անցել, մինչ հատակն ըմպել թույնի բաժակը, բայց միշտ էլ անբաժան մնալով իր ժողովրդից՝ պատվար է հանդիսացել նրա ազգային ինքնուրույնության, մաքառել նրան ձուլելու փորձերի դեմ. մինչդեռ Հռոմի եկեղեցին հայ ժողովրդից մասնատված հատվածներին պապականության գիրկը ներգրավելով նպաստել է նրանց օտարացմանը, խորթացմանը և ազգի համար անդարձ կորստյանը.—ահավասիկ ձեզ Լեհաստանի հայաշատ գաղութը և այլ հայկական հին գաղութները, որոնք շնորհիվ Հռոմի եկեղեցու վարած քաղաքականության գոհ են գնացել «ճերմակ ջարդին» և վաղուց արդեն դադարել են որպես հայկական գաղութներ գոյությունն ունենալուց։

Եվ ամեն անգամ, երբ հայ ժողովրդի համար ստեղծվել են փորձության օրեր, երբ նրա առաջ ծառացել են կենաց և մահու խնդիրները, Հռոմեական եկեղեցին նրա նկատմամբ հանդես է բերել ոչ թե քրիստոնեական մարգասիրություն, այլ նվաստեցուցիչ առևտուր, նողկալի սակարկություն։ Դարերի ընթացքում, երբ հայ ժողովուրդը խեղդվում էր իր իսկ արցունքի ու արյան ծովում, Հռոմի քահանայապետները սառնասիրտ կերպով սակարկությամբ էին զբաղվում։ Թող ներվի մեզ հարցնելու Պիոս ԺԲ պապին, թե ո՞ւր էին Հռոմի այդ քահանայապետները, երբ բովանդակ հայության ֆիզիկական գոյությանը վտանգ էր սպառնում, երբ մահվան սպառնալիքը դամոկլյան սրի պես կախվում էր նրա վրա, երբ Հայաստանի դեսերը, լեռները. բոսոր էին ներկվում հայ բազմատանջ ժողովրդի զավակների արյունով, իսկ նրա լեռնալանջերին ու լեռնահովիտներում մահվան գերանդին իր անողոք հունձն էր անում, երբ հաղարավոր անմեղ մանուկներ ձիերի սմբակների տակ էին նետվում և նիզակների ծայրին ճոճվում, իսկ բազմահազար կանայք ու կույսեր վայրագորեն լլկվում ու բռնաբարվում, երբ շեն գյուղերն ու քաղաքները հրդեհի բոցերով էին բռնվում ու մի ամբողջ քրիստոնյա ժողովուրդ քաղաքակիրթ Եվրոպայի աչքի առաջ բնաջնջման էր ենթարկվում։ Ո՞ւր էին, այդ «պաշտպան» քահանայապետները, մի՞թե չէին տեսնում, որ Հայաստանը, քրիստոնեության այդ արևելյան միջնաբերդը, որ դարեր շարունակ պատվար էր հանդիսացել արևմտյան քրիստոնյա ժողովուրդներին, ետ մղելով ու դիմադրավելով մահմեդական աշխարհի գրոհները, արնաքամ էր լինում խորը վերքերից։

Թե ե՞րբ և ո՞ւր տեղ Հռոմի քահանայապետները իրենց ազդու ձայնը հնչեցրին հայ ժողովրդի մասսայական կոտորածները կասեցնելու, զարհուրելի ոճիրների առաջն առնելու համար, այս մասին Պիոս ԺԲ պապը լռում է։

Բայց մենք չենք լռի, մենք կասենք. Հռոմեական եկեղեցին այդպիսի պահերին հանդես է եկել ոչ թե «պաշտպանի», այլ դաժան սակարկողի դերում։

Հայ ժողովրդի գոյամարտի պահերին Հռոմի եկեղեցին աճուրդի առարկա էր դարձնում մի բովանդակ ժողովրդի ֆիզիկական գոյության խնդիրը և նրա օրհասական ճիչերին, օգնության կանչերին ու աղերսներին պատասխանում էր առևտրականի սառնասրտությամբ, փրկագին պահանջելով. «Ընդունեցեք կաթոլիկացում և կերաշխավորվի ձեր ֆիզիկական գոյությունը». ահա՛, ահա՛, թե

ինչպես էին «պաշտպանում» հայերին «արժանահիշատակ» քահանայապետները Հռոմի։ Ասացե՛ք խնդրեմ, իսկ ի՞նչով էր տարբերվում այս վարմունքով Հռոմի քրիստոնյա եկեղեցին հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացման ենթարկող անօրինակ նախճիրների հեղինակ մահմեդական արյունռուշտ բռնակալներից, չէ որ նրանք էլ նույնն էին պահանջում. «ընդունեցեք իսլամը և ապահովված է ձեր ֆիզիկական գոյությունը»։

Այսպես է «սեր ու հոգածություն» տածել Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ «Պետրոսի Գահը». քրիստոնեական մարդասիրության, գթության փոխարեն — առևտուր. «ծախեցեք ձեր հոգիները Հռոմեական եկեղեցուն, հանուն ձեր ֆիզիկական փրկության»։

Փաստե՞ր են հարկավոր. որքան շա՞տ ու որքան անողոք են այդ փաստերը. նրանք դրված են հայ մարտիրոս ժողովրդի բոսոր արյունով, և ո՞չ ոքի չի հաջողվի պատմության այդ արյունոտ էջերը ոչնչացնել։

Այդպես էր Խաչակրաց արշավանքների ժամանակ, այդպես էր Զեյթունի հերոսական ապատամբության օրերին, և միշտ։

Իսկ ո՞ւր էր Հռոմի «գթասատ» քահանայապետը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, հայկական Մեծ Եղեռի, օրերին, երբ հայ ժողովուրդը Թյուրքիայում ենթարկվեց համատարած ջարդերի, տեղահանման, բնաջնջման ու մասսայական տարագրության, երբ Հայկական Բարձրավանդակը ծածկվել էր հրկիզվող շեն ու բարգավաճ հայկական քաղաքների ու գյուղերի թանձր ծխով, երբ մորթոտվող տղամարդկանց, կանանց և մանուկների ճիչն ու աղաղակը երկինքն էր բարձրացել, երբ եկեղեցիները մարդկային սպանդների էին վերածվել և երբ դիակույտերի տակ ողջ մնացածների օգնության կանչերն անարձագանք էին մընում։ Ի՞նչ էր անում Հռոմի քահանայապետը, հայ ժողովրդի «պաշտպանն ու փաստաբանը» մարդկային մեծ ոճիրի այդ օրերին, երբ հայ ժողովրդի բազմահազար զավակները անեծքի և նզովքի բառերը շրթներին ու մահվան ուրվականը աչքերի առաջ, գըլխահակ ու խոշտանգված քայլում էին տարագրության դիածածկ ճամբաներով դեպի Միջագետքի անապատները, որպեսզի ավազուտներում սփռված ֆրենց գանգերով հուջարձան կանգնեցնեն մարդկային անգթության։ Փորձե՞ց արդյոք նա իր ձեռքի տակ եղած միջոցներով գեթ մասամբ մեղմել հայ ժողովրդի տառապանքները, կասեցնել նրա նկատմամբ գործադրվող անլուր վայրագությունները։ Այո, փորձեց...։ Հռոմի պապը դիմեց Ավստրիայի թագավոր Ֆրանց Իոսիֆին, որպեսզի կոտորածից փրկեն... ի՞նչ եք կարծում, «բովանդա՞կ Հայությանն», որի անունը այդպես սիրում է հոլովել Պիոս ԺԲ պապը. ո՞հ, ո՞չ, ո՞չ, այլ... միայն կաթոլիկ հայերին։ Ահա ձեզ քրիստոնյա քահանայապետի «քրիստոնավայել» վարմունքը. վարմունք, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի նույկանքը կարող է շարժել։ Ահա այսպես են «սեր ու հոգածություն» տածել Հռոմի քահանայապետները «Հայաստանի և Հայութեան» նկատմամբ։

Ո՞ւր էր Հռոմի պապը երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին. դարձյալ հայ ժողովրդի թշնամիների՝ նացիստական-ֆաշիստական վանդալների ճամբարում, ֆաշիստների, որոնք հայ ժողովրդին անբարեհույս հռչակելով դավեր էին նյութում նրա դեմ.

Ինչ վերաբերում է նրան, որ Հռոմի քահանայապետները նաև «փաստաբան» են հանդիսացել հայ ժողովրդի համար, նույնպես չի համապատասխանում իրականությանը։ Այն ժամանակ, երբ Հայ եկեղեցու պետերն ու նրա լավագույն ներկայացուցիչները քրիստոնյա պետությունների դռներն էին բախում շարունակ ու հայ ժողովրդի արյունով գրված աղերսագրերը միջազգային դիվանագիտության սեղանին դնելով աղերսում, խնդրում, որ հայ դատին արդար լուծում տրվի, որ հայ ժողովրդի համար ըստեղծվեն ֆիզիկական գոյության ու խաղաղ աշխատանքի պայմաններ, որ հայ ժողովրդին աղատեն օսմանյան մղձավանջից, նրա բռնակալ լծի տակից, Հռոմի քահանայապետներից և ոչ մեկը իր ձայնը չբարձրացրեց, չաղաղակեց ի լուր աշխարհի թյուրքիայում տիրող դժոխքի մասին, չնայած Հռոմեական եկեղեցին ավելի զորեղ ու ազդեցիկ կապեր ուներ քրիստոնյա բոլոր պետությունների հետ և իր տրամադրության տակ եղած լծակները շարժման մեջ դնելուց անապատ հնարավորություններ ուներ իր ձայնն ազդու ու լսելի դարձնելու համար։ Հետևաբար Հռոմի քահանայապետները երբեմն հայ ժողովրդի «փաստաբանը» չեն եղել և Պիոս ԺԲ պապը չի կարող նշել որևէ պատմական փաստաթուղթ, որ ապացուցի Հռոմի այս կամ այն քահանայապետի հայկական արդարացի պահանջների, հայկական դատի «փաստաբան» լինելը։ Ու՞ր էին

«փաստաբան» քահանայապետները Հռոմի, երբ դարավոր կուլտուրայի տեր մի քրիստոնյա ժողովուրդ մահմեդական օղակի մեջ սեղմված ոչնչացվում էր խարույկի վրա միայն նրա համար, որ քրիստոնեական ուսմունքի շահը անշեջ ու ամուր պահելով իր ձեռքերում և դարերի բովից անցնելով չէր ցանկանում վար դնել այն իր ձեռքից։ Հռոմի քահանայապետները հայ ժողովրդի աղեկտուր ճիչերի հանդեպ նախադասեցին խուլ ու մունջ ձևանալ։ Այս է «շարքը փաստերու հոգածութեան և սիրոյ, որ..... չէ գայրած երբեք Պետրոսի Գահը տածելէ Հայաստանի և իր ժողովրդեան հանդէպ»։

Հռոմի պապ Պիոս ԺԲ-ի «հայասիրությունը» դրվատելուց հետո կարդինալ Աղաճանյանը առիթը չի բաց թողնում Հռոմի եկեղեցին գովերգելու, համարելով նրան «միակ մի և միակ» քրիստոնեական ճշմարիտ եկեղեցի, որը պայքարում է «անաղարտ պահելու քրիստոսանդ վարդապետութիւնը իր ամբողջութեամբ և սրբութեամբ»։

Այստեղ կարդինալ Աղաճանյանը դարձյալ հանդես է բերում Հռոմի անզիջող ու անհաշտ տրադիցիոն քաղաքականությունը մյուս եկեղեցիների հանդեպ, որոնց նա շարունակում է հերձուածող համարել. և ինչպիսի՞ արհամարհական տոնով է խոսում նա այդ մասին,—«խմբակցութիւններ որ իրենք զիրենք Քրիստոսի Եկեղեցի կը յորջորջեն». ապա այդ եկեղեցիների հասցեին լուսանքներ է, որ ջռայլում է. «Ավա՜ղ, քանի քանի խմբակցութիւններ որ իրենք զիրենք Քրիստոսի Եկեղեցի կը յորջորջեն, ,հրաժարած են պատգամաւոր ըլլալէ այդ ամբողջական քրիստոնէական հաւատքին որ սակայն անբաժանելի է։ Քանիներ դիւրաւ... կը յարմարին օրուան իշխողներուն որ յանուն քաղաքականութեան կը տքնին հիմերը քանդել ամեն կրօնքի և աստուածապաշտութեան»։ Դժվար չէ կռահել. թե դեպի ու՞ր է ուղղում իր սլաքները կարդինալը։

Ինչպես ասացինք, կարդինալ Աղաճանյանը իր շրջաբերականում հարևանցիորեն շոշափում է նաև ազգի ու հայրենիքի գաղափարները, տալով դրանց մշուշապատ ձևավակերպում կամ ավելի ճիշտը աղճատելով այդ նվիրական գաղափարների իմաստը։ Կարդինալին հայտնի են, որ ներկայումս գաղութահայ մթնոլորտը էլեկտրականացած է ազգ ու հայրենիք գաղափարներից, որ հայրենիքի սիրով տոգորված մամուլի էջերում և հայրենակարոտ հայերի շրթունքներին այսօր մի առանձին թովչանքով, քաղցրությամբ ու հպարտությամբ են հնչում ազգ ու հայրենիք բառերը ու նրանց համայքը շատ մեծ է։ Այս նկատառումներով կարդինալ Աղաճանյանը ցանկացել է այդ բառերով արտահայտվող նվիրական գաղափարներն իր շրջաբերականում աղճատել ու աղավաղել։ Երբ ամենուրեք խոսվում է հայ ազգի իր հայրենիքում համախմբման մասին, կաթոլիկ եկեղեցին լռությամբ անցնել դրա կողքից չէր կարող, քանի որ «այնքան այլանդակ, օտարամուտ և կործանարար մոլորություններ ապերասանօրէն կը հրապարակուին ամենուրեք և որոնցմէ կրնան վարակուիլ և թունաւորուիլ մերիններն անգամ»։ Ահա հենց այս նպատակով էլ կարդինալը ազգ ու հայրենիք գաղափարներին յուրահատուկ մեկնաբանում տալով ցանկացել է վարակազերծ ու թունազերծ դարձնել։ Նա մի կողմից ուզում է ցույց տալ, որ կաթոլիկ եկեղեցուն խորթ չեն եղել ազգի ու հայրենիքի գաղափարները, որ «Կաթողիկէ կրօնքը ոչ մէկ ատեն ուրացած է հայրենիքի և ազգութեան գաղափարականները», բայց մյուս կողմից իր իսկ բերած օրինակներով ժխտում է ազգի ու հայրենիքի գաղափարները, նախ աղավաղելով ու նուազացնելով հայրենիքի գաղափարը ծննդավայրի հետ և ապա շաղակրատելով «հիրկրաւոր ու երկնաւոր» հայրենիքների մասին. ըստ Աղաճանյանի ստացվում է, որ մարդն ունի «երկրաւոր» հայրենիք և այդ «երկրաւոր» հայրենիքն այնտեղ է, որտեղ ծնվել է նա. այսպիսով ըստ կարդինալ Աղաճանյանի ստացվում է, որ հայկական բազմաթիվ գաղութներում ծնված հայ մատաղ սերնդի հայրենիքը հանդիսանում են հենց այդ գաղութները. ուրեմն լավ լսիր, պանդուխտ հայ՞ դի, դու ուրիշ հայրենիք չունես, քան այն «երկրաւոր» հայրենիքը, ուր ծնվել ու սնվել ես դու, և մոռացիր քո իսկական հայրենիքը, որտեղ քո հարազատ եղբայրներն այսօր փրենց երջանիկ կյանքն են կերտում, մոռացիր քո պապենական օջախը, որ քո նախնիքների՝ հաղարամյոր հայրերի ու մայրերի, քույրերի ու եղբայրների արյունով է նեղկվել։ Կարդինալ Աղաճանյանը, դեռ նախքան «երկրաւոր ու երկնաւոր» հայրենիքների մասին շաղակրատելը, իր շրջաբերականի սկզբում ժխտում է այն, ինչ որ հետագայում ասում է ազգի մասին. այստեղ նա պարտավոր է նրանց, որոնք «հակառակ Քրիստոսի պատգամին..... մի հօտ և մի հովիւ լինելու փոխարեն «կամփոփուին ազգի մը, պետութեան մը սեղմ սահմաններու մէջ». ապա հորդոր է կարդում հանուն աստուծո մոռա-

նալ ազգ ու հայրենիք, «որովհետև Աստծոյ հանդէպ պարտականութիւնները աւելի նուիրական են քան մարդկանց հանդէպ ե-ղածները»։

Բայց մի՞թե հայրենիքը սիրել, Աստծուն մոռանալ է նշանակում կամ Աստծուն սիրելու համար հարկ կա մոռանալ հայրենիքը, որ կարդինալը պահանջում է «նախադասել հոգւոյն բարիքը մարմնոյ բարիքին»։

Այնուհետև որպեսզի ընթերցողները հանկարծակի չգան իր հետագա հայրենատյաց առաջարկներից, նա աշխատում է նախապատրաստել նրանց՝ հայոց պատմութիւնը աղավաղելու և մեր նախահայրերի հայրենասիրության վրա թանձր ստվեր նետելու միջոցով. «Մեր դարաւոր պատմութեան այ ընթացքին, մեր հայերը, քաղցր հայրենի հողին վրայ, յաճախ գտած են իրենք զիրենք ահաւոր երկընտրանքի առջև, կամ ուրանալ ճշմարիտ Աստուածը, զՔրիստոս և անոր Ս. Եկեղեցին, և կամ, եթէ ոչ միշտ արիւնով մկրտուիլ, գէթ պանդխտութեան ցուպը ձեռք առնուլ, օտարութեան և անոր պարտադրած գրկանքներուն մէջ ապրիլ։ Անոնք սակայն Ս. Աւետարանի լուսով հոգեզմայլ և անկեղծ ու խորունկ հաւատքով սնած ու զրահաւորուած, չվարանեցան հրաժարելու ամէն բանէ միայն թէ Աստուծմէ չօտարանային»։

«Այս է մեր հարերու մեզի ձգած օրինակը և կտակը, Վարդանանց օրերէն մինչև վերջին տեղահանութիւնները»։

Եթե ոչ զրպարտում, ապա սխալվում է կարդինալը։ Մեր նախահայրերը Վարդանանց օրերից սկսած մեզ չեն կտակել, որ առանց վարանման պանդխտության ցուպը ձեռքներս առնենք ու օտարություն դիմենք Աստծուց չօտարանալու համար, այլ ընդհակառակը նրանք հայրենի հողի վրա մարտնչել ու պայքարել են ոչ միայն Աստուծո, այլ և իրենց հայրենիքի անկախության, ազատության ու թշնամուց՝ ոտնակոխ չարվելու համար։ Անմահ Վարդանը Ավարայրի դաշտում իր դրոշը պարզեց ոչ միայն հանուն Աստուծո ու քրիստոնեության, այլ և հանուն հայրենիքի։ Հանուն քրիստոնեության և հանուն հայ ազգի ու հայրենիքի ազատության ու ինքնուրույնության Ղևոնդ Երեցի կողմից Ավարայրի դաշտում պարզած խաչն էր, որ դարերի ընթացքում զորավիգ հանդիսացավ հայ ժողովրդի ազգապահպանմանը։

Իսկ ի՞նչ կասի կարդինալը այն մասին, երբ բազմաթիվ ազգեր հանուն հայրենիքի պատերազմում են իրենց իսկ կրոնակից ազգերի դեմ. ի՞նչու նրանց էլ նման խորհուրդներ չի տալիս։ Բայց թողնենք այդ. երևում է խնդիրն այս հարթության վրա դնելը նրա դիտավորությունների սահմանից դուրս է։

Պարզվում է, որ այս բոլոր շաղակրատանքները ազգի ու հայրենիքի մասին արվում էր կանխամտածված նպատակով. երկար ու բարակ դատողություններից, մանվածապատ ճանապարհներ անցնելուց հետո, վերջնականապես կարդինալ Աղաճանյանը ձեռնամուխ է լինում իր բուն նպատակի շարադրմանը.

«Ահաւոր պատերազմի ընթացքին ուրեմն, երբ Դաշնակից Պետութիւնները կը յայտարարէին որ իրենց յաղթանակով պիտի ապահովուէր մարդկութեան, ի մէջ այլոց, Կրօնքի կատարեալ ազատութիւն, իրավունքով և անձկանօք մենք ալ ակնդէտ կը մնայինք այդ օրուան, որ հնարաւորութիւն պիտի տար մեզի, անխախտ պահելով մեր կրոնական համոզումներն ու կարգերը, երթալու Մայր Հայրենիք մեր բաժինը բերելու անոր վերաշինութեան և բարոյական ու կրոնական վերելքին։

«Բայց ոչ սակաւ եղաւ մեր յուսախաբութիւնը երբ հայրենադարձի բանբերները և անոնց մուսետիկները համազգային այս գործին յարանուանական շեղտուած բնոյթ մը տուին, և Հայ Կաթողիկէութեան հանդէպ որ Զարերու բռնատիրական ժամանակ անգամ, կը վայելէր իր ազատ կազմակերպութիւնը հայրենի գաւառներու մէջ, կը զլացուէր արդար և լիովին արժանացած ազատամիտ վերաբերում մը»։

Ահա թե ինչի համար էր արվում այդ երկար ու բարակ շաղակրատանքները պապի «հայասիրութեան», ազգի, հայրենիքի, եկեղեցու մասին։ Կարդինալ Աղաճանյանը դժգոհ է մնացել ահավոր պատերազմի վախճանից. երևում է նրա սպասելիքները չեն արդարացել. նա «Կրօնքի լիակատար ազատութիւն» էր ակնկալում և այն էլ դաշնակից պետությունների հաղթանակից հետո. կարդինալ Աղաճանյանը չէր կարող չիմանալ, որ Հայրենիքում անհատները և համայնքները չեն հալածվում իրենց կրոնական համոզումների համար և որ ոչ միայն քրիստոնեական, այլ և մահմեդական և ուրիշ կրոններ դավանողները համահավասար արտոնություններ են վայելում։ Եկեղեցու պետությունից անջատված լինելը դեռ չի նշանակում կրոնի ազատության չգոյու-

թյուն. ուրիշ երկրներում էլ եկեղեցին անջատված է պետությունից, բայց ոչ ոք չի կարող ասել, որ օրինակ Ֆրանսիայում կրոնի ազատություն գոյություն չունի։ Եթե կարդինալ Աղաճանյանն այդչափ նախանձախնդիր է կրոնի լիակատար ազատության, ինչու՞ ապա չի խոսում այն կրոնական հալածանքների մասին, որ կատարվում են Հռոմի Եկեղեցու հովանավորությամբ. ինչու՞ նա լռում է Եթովպիան Իտալիայի կողմից օկուպացվելուց հետո այնտեղից բողոքական միսիոներներին դուրս վտարելու, Իսպանիայում բողոքական եկեղեցիները փակելու ու ավետարանները բռնագրավելու, Մեկսիկայում բողոքականներին գանակոծելու, սպասելու, նրանց կրոնական շենքերն ավերելու, Հարավային Ամերիկայի շատ երկրներում բողոքականներին հալածելու մասին և այլն։

Կարդինալ Աղաճանյանն ի հարկե չի կարող իրազեկ չլինել Հայրենիքում տիրող կարգերին. բայց նրան անհրաժեշտ է իրականությունը շրջված ներկայացնել, փաստերն աղավաղել, բամբասել, զրպարտել, որովհետև նպատակն արդարացնում է միջոցները։ «Կրոնքի լիակատար ազատության» չգոյության շուրջը հյուսած առասպելներով նա ցանկանում է վախեցնել ոչ միայն իր հոտին, այլ ընդհանրապես հայ հավատացյալ ժողովրդին։ Այս բոլորը նա կատարում է մի հիմնական նպատակ հետապնդելով. հայրենիքը մռայլ գույներով ներկայացնելով, կասեցնել հայ տարագիր ժողովրդի ներգաղթը Հայրենիք.

«Ուրեմն մեզի կը պարտադրուի տակավին պանդխտութեան մէջ մնալ որպես զի անաղարտ պահենք մեր Կաթողիկէ Ս. Հաւատքը»։

Եվ ամբողջ շրջաբերականը գրվել է այս մի հատիկ նախադասության համար. ինչպես ընդունված է ասել «բոլոր ճանապարհները դեպի Հռոմ են տանում», այնպես էլ կարդինալ Աղաճանյանի բոլոր շաղակրատանքները այս մի նախադասությանն են հանգում։

Լավ լսի՛ր, հայ պանդուխտ հավատացյալ ժողովուրդ, դու դեռ երկար պետք է դեգերես պանդխտության մեջ, չկա դարձ դեպի Հայրենիք. կարդինալը քարոզում է ամուր պահել գաղթացուպը և Հայրենիք չերթալ, որպեսզի «անաղարտ պահես քո Ս. Հաւատքը». նա հորդորում է հեռու մնալ Հայրենիքից, որովհետև այնտեղ «կը տքնին հիմերը քանդել ամեն կրօնքի և աստուածապաշտութեան»։

Բայց հարց է ծագում, թե մինչև ե՞րբ պետք է հայ ժողովրդի աստանդական հատվածները մնան հայրենի ափերից հեռու ու իրավազուրկ ապաքաղաքացու վիճակում թափառեն երկրե-երկիր. այս հարցին շատ անտրոշ, մշուշապատ, մռայլ ակնարկներով հղի պատասխան է տալիս կարդինալը. նա առաջարկում է սպասել մինչև Հայրենիքի «դարձը քրիստոնէական արշալոյսի..... դեղեցկութեան» և հուսադրում է «թէ պիտի հնչէ Աստուծմէ որոշուած այդ ցանկալի ժամը», իսկ մինչ այդ հորդորում է մնալ «Սփիւռքի մէջ, վայելելով ազնիւ և լայնամիտ ասպնջականութիւնը գաղթավայրերու.....»։

Այսպիսով, երբ իրականացել են գաղթացուպը ձեռներին դեգերող բազմահազար հայրենադարձ հայերի իղձերը, երբ նրանց առաջ լայն բացվել են Հայրենիքի դռները, կարդինալ Աղաճանյանը, կեղծ դիմակ հագած, այդ դռների առաջ Աստուծո անունից կուրծքը ծեծում, հավատացնում, համոզում է ետ կանգնել Հայրենիք մեկնելուց։ Սակայն նա անզոր է հայրենակարոտ մարդկանց խորաթափանց հայացքից ծածկելու Արարատի ստորոտում ծաղկող Հայրենիքը։

Ներգաղթի գործը ձախողելու համար կարդինալ Աղաճանյանը մյուս կողմից ներկեր չի խնայում «գաղթավայրերուն կյանքը, ամա նաւանդ Մերձաւոր Արևելքի մէջ», վառ գույներով ներկայացնելու. նա գրում է. «խղճի ճշմարիտ ազատութեան հետ ունեցանք և ունինք հասարակական կեանքի և մշակոյթի ամեն դիւրութիւններ, և որոնց շնորհիւ այս գաղութները համեմատաբար քիչ ժամանակուայ մէջ հասան նախանձելի վիճակի»։ Սակայն նա դիտավորյալ կերպով նախ աչքաթող է անում հայ մշակույթի զարգացումը բուն Հայրենիքում և երկրորդը՝ մոռացության է մատնում այն հանգամանքը, թե ո՞րոնք են այն ակունքները, որ թե՛ սնում ու թե՛ խթանում են հայ մշակույթի զարգացումը գաղութներում։ Հայտնի է, որ ոչ մի հայկական գաղութում հայ մշակույթի զարգացումը պայմանավորված չէ պետական օժանդակությամբ և նրա փոքր ի շատ զարգացումը հանդիսանում է լոկ հասարակական կազմակերպությունների ու հայրենասեր անհատների ձեռներեցության արդյունք, մինչդեռ բուն Հայրենիքում պետությունը բոլոր միջոցներն ստեղծել է հայ մշակույթի ծաղկման համար, որի հետևանքով էլ հայ մշակույթը ներկայումս Հայրենիքում ապրում է իր նոր ու փառահեղ Ոսկեդարը. միաժամանակ պիտի ասել, որ այս կամ այն հայկական գաղութում եթե հայ

մշակույթը զարգանում, աճում է, ապա շնորհիվ Սովետական Հայաստանի գոյության փաստի, որը ուղեցույց աստղ. ոգևորության ու ներշնչման աղբյուր է հանդիսանում գաղութահայ մշակույթի զարգացման համար, խթանելով նրա առաջընթացը։ Սովետական Հայաստանի գոյության փաստը ջերմացնում, կենսատու հյութով ներարկում է գաղութահայ մշակույթի անխոնջ մշակների երակները, դուրս մղելով նախկինում նրանց մոտ իշխող լքվածությունը, հուսահատությունը, անկումային տրամադրությունները և նոր թափ հաղորդելով, նորանոր խիզախումների մղում նրանց։ Իսկ եթե հայկական գաղութներում բարյացակամ վերաբերմունք գոյություն ունի դեպի հայերը, ապա այդ էլ մասամբ շնորհիվ նրան, որ ամենուրեք հայ ժողովուրդը անվերապահորեն իր բոլոր ֆիզիկական ու հոգեկան կարողությունները ի սպաս դրեց աղատատեր ժողովուրդների հաղթանակի գործին, մեծապես նպաստելով ֆաշիստական վանդալների ջախջախմանն ու խորտակմանը. այդ բարյացակամ վերաբերմունքն ստեղծվել է քառորդ միլիոնից ավելի հայ քաջարի մարտիկների ու մի քանի տասնյակ տաղանդավոր հայ զորավարների շնորհիվ, որոնք իրենց սքանչելի սխրագործություններով անմահ փառապակ հյուսեցին հայ ժողովրդի համար. այդ վերաբերմունքը ստեղծվել է աշխարհի բոլոր ռազմաբեմերում մարտնչող հայ ռազմիկների և բազմաթիվ երկրների ընդհատակում պայքարող հայ պարտիզանների շնորհիվ։

Ինչ վերաբերում է «նախանձելի վիճակին», ապա կարդինալ Աղաճանյանն այստեղ ևս հավատարիմ է իրեն, այստեղ ևս նա խեղաթյուրում է իրականությունը։ Ամենայն Հայոց Հայրապետը հայկական զանազան գաղութներից բազմաթիվ դիմումներ է ստացել, որոնց մեջ նկարագրված է պանդուխտ հայ ժողովրդի զրկանքներով լի կյանքը, նրա իրավազուրկ վիճակը, գործազրկությունը, ծայր աստիճան ծանր կացությունը։ Դիմողները խնդրում, աղերսում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին միջնորդել կառավարությանն առաջ փութացնելու իրենց օր առաջ ներգաղթը. Հայրենիք։

Կարդինալ Աղաճանյանը իր շրջաբերականում խոսում է նաև Հայ Կաթողիկե Պատրիարքարանի մասին, որը «բերած է և կը բերէ յաճախ ազդու իր աջակցութիւնը Հայ Ազգիս և անոր դատին և զաւակներուն ի նը-պաստ, թէև իր միջամտութիւնները շատ անգամ կը մնան քօղարկուած և հեռու փողահարուելէ»։

Հետաքրքիր է, թե «այդ ի՞նչ «միջամտութիւններ» են, որ «շատ անգամ կը մնան քօղարկուած և հեռու փողահարուելէ». տարօրինակ է, թե ինչո՞ւ նրանք քողարկված են պահվում, եթե իրոք արժանի են հրապարակման. թույլ տվիք, կասկածելու, որ այդ քողարկված «միջամտությունները» արվում են ոչ թե հօգուտ հայ ազգի ու հայ դատի, այլ հօգուտ Վատիկանի քաղաքականության և ի վնաս հայ դատի։ Անցյալը մի կողմը թողնենք և խոսենք այն մասին, թե ինչ է արվում հայ ազգի ու դատի համար Կաթողիկե Պատրիարքարանի կողմից։ Այսօր, երբ բովանդակ հայությունը միակամ պահանջում է, որպեսզի Թյուրքիայի կողմից անարդարացի կերպով բռնագրավված հայկական նահանգները միակցվեն Սովետական Հայաստանին, որպեսզի այսպիսով հնարավորություններ ստեղծվեն սփյուռքում մեկ ցրված պանդուխտ բոլոր հայերի համար իրենց Հայրենիքում համախմբվելու ու այնտեղ եղած եղբայրների հետ միասին իրենց երջանիկ կյանքը կերտելու, երբ Միավորված Ազգությունների Կազմակերպությանը և այլ տեղեր բազմաթիվ դիմումներ են արվում, երբ օտարազգի քաղաքական, հասարակական, գիտական գործիչներն անգամ դիմումներ են անում հայկական պահանջները հարգելու համար, Կաթողիկե Պատրիարքարանը թշնամական դիրք է բռնում ներգաղթի հանդեպ և լռության մատնելով հայկական պահանջները, ջուր է լցնում հայ ժողովրդի թշնամիների ջրաղացի վրա։ Պատրիարքարանդ դեմ լինելով ներգաղթին, դեմ է ընդհանրապես նաև հայկական պահանջներին. հայկական գերված հողերի վերադարձին։ Մա՞ է Ձեր աջակցությունը հայկական դատին կամ Դուք աջակցություն ե՞ք համարում հայ դատին այն, որ «զրպարտելով ու վարկաբեկելով Հայրենիքը, կոչ եք անում հրաժարվել այնտեղ մեկնելուց։ Թույլ տվեք ասելու, որ Պատրիարքարանիդ «միջամտությունները», որոնք «կը մնան քօղարկուած», նպատակ ունեն թերևի գաղտնի դիվանագիտական ճանապարհներով հայ ժողովրդի թշնամիներին տրամադրել արգելակելու հայկական արդարացի պահանջների կենսագործումը։

Իսկ ի՞նչ է արել հօգուտ հայ դատի «հայասեր» Պիոս ԺԲ պապը։ Երբ Ամենայն Հայոց Հայրապետ Գևորգ Զ, հարազատ թարգմանը հանդիսանալով բովանդակ հայ ժողովրդի իղձերի, նվիրական Արարատի ստո-

ոտից իր հաղթ ձայնն է հնչեցնում, հրավեր կարդալով իր պաշտպան զավակներին հայրենիքում համախմբվելու և երեք մեծ տերությունների ղեկավարներին խնդրում «ճանաչել հայերի իրավունքը իրենց պատմական հայրենիքի վրա, որ նոքա սրբագործել են իրենց արյունով ու քրտինքով և ծածկել հիշատակաց արժանի հարուստ կոթողներով», Հռոմի Պիոս ԺԲ «հայասեր» պապը լռություն է պահպանում՝ հրաժարվելով հօգուտ հայ դատի իր ձայնը հնչեցնելու Վատիկանի այն «ձայնասփիւռի» ալիքների միջից, որը «օրեր շարունակ գովքը հիւսեց հայ ժողովրդին», առասպելներ հյուսելով պապի «հայասիրության» շուրջը. բայց խստիվ լռություն պահպանելով Հայ Հայրենիքի, հայ դատի ու հայկական պահանջների մասին։

Կամ նշենք, ինչ է արվում Միջին ու Մերձավոր Արևելքի հայաշատ գաղութներում. այն ժամանակ, երբ Գարեգին կաթողիկոսը ապրում, շնչում է Հայրենիքով, ամենուրեք սատարում է ազգահավաքման մեծ գործը իր մեծագույն ծառայությունը բերելով ներգաղթի կազմակերպմանը և կոչ է անում գաղութահայությանը արևածագի նման երեսով դառնալ դեպի հայ ժողովրդի «կենդանության արևը, որ մեր Հայաստանն է թանկագին», կարդինալ Աղաճանյանը քարոզում է երես դարձնել Հայաստանից, հրաժարվել այնտեղ ներգաղթելուց։

Կարդինալ Աղաճանյանի ներգաղթի դեմ զենքեր ճոճելը, պանդխտության մեջ մնալու հիստերիկ կոչերը և հայկական պահանջները ձախողելու փորձերը մի ընդհանուր ակունքից են բխում և այդ ակունքը հանդիսանում է Վատիկանը. կարդինալ Աղաճանյանի հականերգաղթային այս գործունեությունը սերտ փերպով կապված է Վատիկանի քաղաքական գործունեության հետ, քաղաքական գործունեություն, որը բանադրվել է Հայ Եկեղեցու կողմից։

Իզուր է ճգնում կարդինալ Աղաճանյանը ամենայն զգուշությամբ թագցնելու իրողությունը, որ «Հռոմայ Ա. Աթոռը քաղաքական բնեռ մը չէ, այլ սոսկ կրօնական» և որ ինքը քաղաքական նպատակներ չի հետապնդում, այլ սոսկ նկատի ունի «խղճի ազատութիւն», «կրօնական վերելք», և այլ շաղակրատանքներ։

Այսպիսով կարդինալ Աղաճանյանը ջանք չի խնայում հայ վտարանդի ժողովրդի բեկորները պապի քաղաքականության զոհասեղանի վրա ողջակիզելու։

Սակայն հայ աստանդական ժողովուրդը, լինի նա կաթոլիկ, բողոքական, թե լուսավորչական, այլևս ոչ մի մտադրություն չունի աճուրդի առարկա դառնալու։

Այս բոլորն արձանագրելով, մենք բնավ մտադրություն չունենք կրոնական վեճեր հրահրել ու կրքեր քրքրել. մեր նպատակն էր պատմական իրողությունների ճշտությունը վերականգնել ու զերծ դարձնել այն աղավաղումից և միաժամանակ նշել այն դրդապատճառները, որոնք առիթ են ծառայել այդ աղավաղմանը։

Այժմ, երբ մեր առաջ ծառացած են Հայրենիքի է՛լ ավելի ծաղկման ու հզորացման և սփյուռքում ցրված հայությունը նրա մեջ համախմբելու խնդիրները, ժամանակը և տեղը չէ կրոնական կամ այլ վեճերով զբաղվելու։ Հայ ժողովրդից այժմ քան երբեք պահանջվում է միասնական կամք։

Մեզ սխալ չպետք է հասկանալ, մեր բոլոր ասածները ուղղված չէին մեր կաթոլիկ եղբայրների դեմ. Հայ Եկեղեցին թշնամության նշույլ անգամ չի տածում կաթոլիկ կամ բողոքական իր եղբայրների հանդեպ։ Հայ Եկեղեցուն, հակառակ Հռոմի Եկեղեցու, խորթ են եղել կրոնական հալածանքները, անհամբերատարությունը կամ ուրիշներին իր գիրկը ներգրավելու ձգտումները. նա մյուս եկեղեցիներին համարել ու համարում է քույրեր։ Ինչպես Գևորգ Զ Հայրապետն է ասում, «Հայոց Եկեղեցին ունի վերին աստիճանի ներողամիտ ոգի. նորա տարեգրությունների մեջ չի կարելի գտնել կրոնական հալածանք, ժողովուրդը ստրկացնելու ձգտում, աններողամտություն և անհամբերատարություն»։

Մենք համոզված ենք, որ կաթոլիկ հայությունը չի բաժանում կարդինալ Աղաճանյանի տեսակետները ազգի, հայրենիքի և հատկապես Սովետական Հայրենիքի նկատմամբ. այդ են վկայում Հայրենիք ներգաղթող կաթոլիկ հայերի խմբերը և կաթոլիկ հայերի ելույթները։ Մենք չենք կարծում, որ կաթոլիկ հայերի մեջ մեռած լինի հայրենասիրական ոգին նույնչափ, որչափ կարդինալ Աղաճանյանի մոտ. հայրենասիրական զգացմունքները համամարդկային են, ապա և նրանք խորթ չեն նաև մեր կաթոլիկ եղբայրների համար։ Քիչ բան չեն արել նաև մեր կաթոլիկ եղբայրները հայ կուլտուրայի զարգացման համար. մենք մեծ գոհունակությամբ ու անհուն երախտագիտությամբ կարող ենք նշել այնպիսի կաթոլիկ հայերի անուններ, ինչպիսիք են Մխիթարյան միաբանության անդամները,

որոնք խոշոր ներդրումներ են արել հայ կուլտուրայի, հայ մշակույթի զարգացման գործում, ու բորբոքել հայի սրտում հայրենասիրական սրբազան զգացմունքները։

Կաթոլիկ, բողոքական և լուսավորչական հայերը ամենից առաջ եղբայրներ են և կապված են միմյանց հետ բազմաթիվ անքակտելի կապերով. նրանք կազմում են մի միասնական ընտանիք և ինչպես ընտանիքի անդամները տարբեր համոզումներ ունենալով չեն դադարում մի համերաշխ ընտանիք կազմելուց, այդպես էլ պատմական դեպքերի բերումով հայ ժողովրդի տարբեր հատվածների տարբեր կրոնական համոզումներ ունենալը չի խանգարում նրանց մի ընդհանուր համահայկական ընտանիքի մեջ համախմբվելուն, հայրենի օջախի շուրջը բոլորվելուն։ Ինչպես հայ ժողովրդի մյուս հատվածները, այդպես էլ հայ կաթոլիկները հեռու լինելով հայրենի օջախից, օտար հորիզոնների տակ չեն գտնվել իրենց սիրտքով հայացքը դեպի նվիրական Արարատն ուղղել։ Հայ ժողովուրդը, ներառյալ նաև հայ կաթոլիկները, դարեր շարունակ տենչացել է հայ պետականությունը վերականգնված տեսնել և այսօր, երբ իրականացել են նրա դարավոր իղձերը, չի կարող նա սփյուռքում մնալ ու իր Հայրենիքը չդառնալ։

Բովանդակ հայ ժողովուրդը փրկության մի հանգրվան միայն ունի և դա Սովետական Հայրենիքն է, դեպի ուր ձգվում են բոլոր գաղութահայերի ուղիները։ Հայ ժողովուրդը Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում միայն կարող է ապրել հաւերաշխ ու զարգացնել իր ազգային մշակույթը։

Իզուր են կարդինալ Աղաճանյանի փորձերը՝ ետ պահելու հայրենադարձներին և նրանց փրկության նավը դեպի Վատիկանի խութերով ու ծանծաղուտներով հարուստ, մռայլ անակնկալներով հղի ու պղտոր նավահանգիստն ուղղելու ջանքերը։

Հայրենադարձ հայությունը, հայացքը հառած Արարատի ստորոտում վառ փայլող, ժպտուն ու գերող և գաղութահայության ուղին լուսավորող աստղին, իր փրկության նավի առագաստները լայն բացած, կյանքի ալեծուփ ծովի ալիքները ճեղքելով ու Ղովտի նման առանց ետ նայելու, դեպի Հայրենիք, դեպի Սովետական Հայաստան է շարժվում։

Վ.